ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ « Համագործակցային ուսուցման դրույթների տեղայնացում անգլերենի ուսուցման միջոցով»
ԱՌԱՐԿԱ՝ Անգլերեն
ՀԵՂԻՆԱԿ՝ Ասլանյան Մարինե
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Տոլորսի միջն. դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Դավթյան Վեներա

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գրական ակնարկ 4
ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 5
1.1 Համագործակցային ուսուցման էությունը, առանձնահատկություններն ու խնդիրները 5
1.2 Համագործակցային ուսուցման տարրերը 9
1.3 Համագործակցային ուսուցման սկզբունքները 10
1.4 Համագործակցային մեթոդներն և դրանց կազմակերպման ձևերը 11
ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 15
2.1 Համագործակցային ուսուցման գործնական կիրառությունը ուսումնական գործընթացում 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ 18
ՀԱՎԵԼՎԱԾ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի տեսական, տեղեկատվական հիմքերը, արդիականությունը և նպատակը:

Վերջին տարիների ընթացքում մեր երկրում քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխություններով պայմանավորված՝ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել հանրակրթության ոլորտում, այդ թվում՝ օտար լեզուների ուսուցման ոլորտում: Այս փոփոխությունները համարվում են կրթության առաջնահերթ ուղղություններից մեկը: Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա:

Դպրոցում նույնպես անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Արդի ժամանակաշրջանում շատ կարևոր է սովորողի կարողունակությունների զարգացումը, գիտելիքների յուրացման և կիրառման գործնական հմտությունների ձեռքբերումը, որն էլ ենթադրում է սովորողների արդյունավետ համագործակցություն և սովորելու գործընթացը ինքնուրույն կազմակերպելու անհատի կարողությունների զարգացում:

Այսպիսով, ուսուցման նպատակն է դառնում սովորել, սովորեցնել, որին էլ էապես նպաստում է համագործակցային ուսուցման դրույթները, որով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Սակայն պետք է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Տվյալ դեպքում հոմագործակցային ուսուցումը ավանդականից տարբերվում է նրանով, որ կարևորվում է ոչ միայն այն, թե ինչ պետք է սովորեցնել, այլ նաև այն, թե որը պիտի լինի ուսուցման արդյունքը, այսինքն՝ ի՞նչ վերջնարդյունք ենք ակնկալում: Այստեղ վճռորոշ գործոնն այն է, թե որքանով են սովորողի ձեռքբերումները մոտենում չափորոշիչում նշված նպատակներին (օտար լեզվակիրների հետ շփում, հաղորդակցում, աշխատաշուկայում մրցու նակության մեծացում և այլն) :

Մենք դասավանդման ընթացքում կիրառում ենք խմբային աշխատանքներ, սակայն ոչ բոլորս ունենք ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն:

Դպրոցում է դաստիարակվում վաղվա քաղաքացին, ով պետք է լինի կրթված, հասուն, նա պետք է ունենա պետական մտածողություն, լինի փոխօգնության պատրաստ, հանդուրժող, օրենքները հարգող, կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և ճիշտ որոշումներ կայացնող: Համագործակցային ուսուցման մեթոդների լիարժեք կիրառման դեպքում կարելի է հաջողությամբ հասնել ուսուցման վերոհիշյալ նպատակներին: Համագործակցային ուսուցման դրույթների ուսուցումը ուսուցման գործընթացը կդարձնեն առավել գրավիչ և հետաքրքիր: Այն սովորողների համար կստեղծի դասապրոցեսին հավասար մասնակցության հնարավորություններ:

Համագործակցային ուսուցման հաջողությունը հաճախ կախված է դրանց տեղայնացումից՝

համապատասխանեցնելով ուսումնական միջավայրի մշակութային նորմերին, արժեքներին և լեզվական առանձնահատկություններին:
Այս հետազոտական աշխատանքը **նպատակ** ունի բացահայտելու, թե ինչպես կարող է համագործակցային ուսուցման դրույթները արդյունավետ տեղայնացվեն անգլերեն լեզվի ուսուցման շրջանակներում՝ նպաստելով լեզվի յուրացմանը և միջմշակութային փոխըմբռնմանը:
Օտար լեզվի ուսուցման գերակա *նպատակը* հաղորդակցության կարողությունների և դրանց միջոցով սովորողի անձի՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի ձևավորումն է:
Օտար լեզու դասավանդելիս ուսուցման ողջ պրոցեսը ուղղված է լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելուն, այսինքն գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը:
Առաջադիր խնդիրներն են՝

- Ուսումնասիրել համագործակցային ուսուցման ձևերը,
- Ներկայացնել համգործակցային մեթոդները և դրանց կազմակերպման ձևերը,
- Ներկայացնել համագործակցային ուսուցման գործնական կիրառման արդիականությունն և անհրաժեշտությունը:

Գրական ակնարկ

<<Գիտելիքը պետք է ծառայի մարդու ստեղծագործական նպատակներին: Գիտելիքներ կուտակելը քիչ է. հարկավոր է հնարավորին չափ դրանք լայնորեն տարածել և կիրառել կյանքում:>>
Ն. Ա. Ռուբակին

Համագործակցային ուսուցման կիրառման պատմությունը գալիս է դեռևս անտիկ ժամանակներից: Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են երեք գաղափար: Զոնսոնները, որպես այդպիսիք, առանձնացնում են սոցիալական փոխկախվածությունը, ճանաչողական զարգացումը և վարքագծային ուսումնառությունը:
Սոցիալական փոխկախվածության գաղափարի հիմքում ընկած են խմբային զարգացման ուղղությամբ Կուրտ Կաֆկայի և Կուրտ Լևինի կատարած հետազոտությունները: Նրանք առաջարկեցին խումբը դիտարկել որպես մի դինամիկ ամբողջություն, որտեղ կարևորվեց ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը: Ըստ Լևինի՝ հենց այդ փոխկախվածությունն է տանում դեպի «դինամիկ ամբողջություն», քանզի խմբի անդամներից որևէ մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ այդ ներխմբային լարվածությունը տանում է դեպի խմբային ընդհանուր նպատակի իրականացմանը:
Ճանաչողական տեսության զարգացման հիմքում ընկած են Պիաժեի, Վիգոտսկու և

Բրունների հետազոտությունները: Պիաժեն պնդում էր, որ երբ անհատները համագործակցում են միջավայրում, ապա տեղի է ունենում սոցիալ-ճանաչողական հակասություն, ինչը հանգեցնում է հավասարակշռության խախտման: Վերջինս էլ իր հերթին խթանում է հեռանկարը տեսնելու կարողությունը և ճանաչողական զարգացումը:
Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը մոտիվացիա է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի:
Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա տարածմանը նպաստող գործոններից են բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.1 Համագործակցային ուսուցման էությունը, առանձնահատկություններն ու խնդիրները

Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակված իմաստության գիտակցման արվեստն է: Հասարակաության մեջ ուսուցչին մասնագիտական կարգավիճակ է տրվում: Մեզնից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով: Այլևս բավարար չէ երեխաների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը, ոչ էլ սոսկ ըմբռման, անձնական նախընտրության կամ ավանդական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը: Ժամանակակից ուսուցիչները պարտավոր են կիրառել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնց արդյունվետության մեջ համոզվել են գործնականում:
Այսպիսով, փորձենք ներկայացնել մեթոդներից մեկը, որը աչքի է ընկնում իր արդյունավետությամբ և աշակերտների ուշադրությունը գրավվելու իր կարողությամբ:
Բայց նախքան համագործակցային ուսուցման բուն տարրերին անցնելը՝ փորձենք բնութագրել համագործակցային ուսուցում հասկացությունը:

Համագործակցային ուսումնառությունը դասավանդման համակարգված, կանոնակարգված ռազմավարություն է, որի դեպքում աշակերտների փոքր խմբերը համատեղ աշխատանք են ծավալում ընդհանուր որևէ նպատակի իրագործման կամ խնդրի լուծման համար: Համագործակցային ուսումնառությունը համատեղ ուսումնառության մի տեսակ է: Այն ներառում է խմբային ուսումնառության բազմապիսի տարբերակներ, ինչպիսիք են համագործակցային ուսուցումը հասակակիցների խմբերում, ուսուցիչ-աշակերտ հետազոտական ծրագրերի իրականացումը, ‹‹բզզացող›› խմբերով /buzz groups/ կարճաժամկետ աշխատանքը, սովորողների համայնքների կազմակերպումը և այլն:

Համագործակցային ուսուցման/ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդավարական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:

Համագործակցային ուսումնառության պատմության մեջ մյուս կարևոր դեմքը սոցիալ-հոգեբանության մասնագետ Քըրթ Լևինն է, որը 1930-40-ական թվականներին ժողովրդավարական խմբերի ղեկավարների ու անդամների վարքագիծը հասկանալու գործում կորևորել է խմբային աշխատանքի դինամիկայի նշանակությունը:

Քննադատական մտածողության, արժանապատվության զարգացման, միջէթնիկական հարաբերությունների, հասարակամետ վարքագծի և շատ այլ չափանիշների վրա համագործակցային ուսումնառության դիտարկումներն ու վերլուծություններն աներկբայորեն ցույց են տվել, որ այս մեթոդը դասավանդման ավանդական ձևերից առավել գերադասելի է և հազվադեպ է զիջում դասավանդման այլ տեսակներին:

Համագործակցային ուսումնառության մեթոդները կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է խորհի հետևյալ հարցերի շուրջ.

1. Երբ ինքներդ աշակերտ էիք, համատեղ աշխատելու կամ սովորելու գործընթացում ի՞նչն էր ամենից շատ դուր գալիս ձեզ, իսկ ի՞նչը՝ ոչ:
2. Ի՞նչ կարող են աշակերտները սովորել համատեղ աշխատելու դեպքում:
3. Համատեղ ուսումնառության ո՞ր կողմերն են հատկապես արդյունավետ:

Ուսուցչակենտրոն մեթոդով վարվող դասերի ընթացքում ուսուցիչներն աշխատում են հիմնականում ամբողջ դասարանի հետ, կամ էլ ուսումնասիրվող թեմայի, նյութի բովանդակության որևէ հատվածը յուրացնելու համար աշակերտներն անհատական աշխատանք են կատարում: Այդ դասերի նպատակն ու կառուցվածքն հիմնված են անհատական մրցակցության և ջանքերի վրա: Մինչդեռ համագործակցային ուսումնառության դեպքում աշակերտներին խրախուսում և նրանցից պահանջում են միասին աշխատել որևէ ընդհանուր առաջադրանքի վրա: Համագործակցային ուսումնառությամբ վարվող դասերը բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններով.

1. Ուսումնական նպատակների իրականացման համար աշակերտներն աշխատում են թիմերով.
2. Թիմերում ընդգրկված են ուժեղ, միջին և թույլ աշակերտներ:
3. Խրախուսվում է ամբողջ թիմը և ոչ թե որևէ անհատը:

Համագործակցային ուսումնառությունը կարող է օգտակար լինել թե՛ ցածր, թե՛ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար, ընդ որում՝ առավել ուժեղ աշակերտներն օգնում են մյուսներին: Համագործակցային ուսումնառությունը աշակերտներին հնարավորություն է ընձեռում նաև աշխատել փոխադարձ կախվածության պայմաններում, ինչպես նաև սովորել գնահատել միմյանց: Համագործակցային ուսումնառության նպատակներից մեկն էլ աշակերտներին համագործակցության և համատեղ աշխատանքի հմտություններով «զինելն»է:

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու[1]:

Համագործակցային ուսումնառության մեթոդով դասերը վարելու 6 հիմնական քայլերն են.

1. Դասի նպատակների հստակ սահմանում:

[1] Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006, 122 էջ

2. Սովորելու շահագրգռվածության ապահովում /շարժառիթ, դրդապատճառի ստեղծում/:

3. Տեղեկատվության մատուցում:

4. Աշակերտների բաժանումը թիմերի /համագործակցային խմբերի ստեղծում/:

5. Ուսուցչի աջակցությամբ աշակերտների թիմային աշխատանքի կազմակերպում:

6. Թիմային աշխատանքի վերջնական արդյունքի ներկայացում:

Այսպիսով, համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Համագործակցային ուսուցումը, որ մշակվել է մանկավարժների կողմից, ուսուցիչների և աշակերտների հարաբերությունները դիտարկում է նոր մակարդակում՝ առավել մարդասիրական ու վստահության հիմքերի վրա: Այն հիմնվում է ոչ թե առանձին սովորողների մրցակցության, այլ նրանց համատեղ աշխատանքի վրա: Որպեսզի համագործակցային ուսուցումը արդյունավետ լինի, անհրաժեշտ է ուսումնասիրել դրա առանձնահատկությունները:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ.

1. Խմբի անդամների գիտակցված ստեղծագործական համագործակցություն:

2. Մասնակիցների ակտիվ ստեղծագործական հարաբերություններ:

3. Համատեղ աշխատանքին գիտակցական մասնակցություն և պատասխանատվություն՝ ընդհանուր գործի հաջողության համար:

4. Զույգով կամ փոքր խմբով աշխատելու հմտություններ:

5. Արդյունավետության բարձրացման նպատակով խմբի ներսում աշխատանքի ընթացքի մասին քննարկումների պարբերաբար կազմակերպում:

Համագործակցային ուսուցմամբ դասերի կազմակերպման ժամանակ ուսուցիչը պետք է լուծի վեց հիմնական խնդիր.

1. Որոշել դասի նպատակները:

2. Կատարել նախապատրաստական աշխատանք, որը ներառում է՝

ա/խմբերի ձևավորում

բ/դասասենյակի նախապատրաստում

գ/խմբի ներսում մասնակիցների դերի որոշում

3. Ներկայացնել առաջադրանքը՝ ինչ են կատարելու, ինչ նպատակով, ինչ արդյունքներ են ակնկալվում և խմբերին տալ հանձնարարություն:

4. Օգնել աշակերտներին սկսել աշխատանքը խմբի ներսում:

5. Հետևել աշխատանքի արդյունավետությանը, միջամտել միայն անհրաժեշտ դեպքերում:

6. Գնահատել աշակերտների մասնակցությունը, լսել խմբի անդամների կարծիքը սեփական աշխատանքի և խմբի ներսում աշակերտների հետ համագործակցության վերաբերյալ:

1.2 Համագործակցային ուսուցման տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը: Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների[2] հինգն են, իսկ վեցերորդ տարրը հետագայում ավելացվեց Պասի Սալբերգի կողմից:



Սխեմա 1.1 Համագործակցային ուսուցման տարրերը

[2] Johnson, D. W., Johnson, R. T., & Holubec, E. (2008) “Cooperation in the classroom" (8th ed.). Edina, MN: Interaction Book Company.

Համագործակցային ուսուցման տարրերն են՝

1. **Դրական փոխկախվածություն.** Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու և աջակցելու մթնոլորտ: Սովորողների ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն, որի արդյունքում նրանց մեջ ձևավորվում է հանդուրժողականություն և վստահություն:
2. **Դեմ առ դեմ փոխազդեցություն.** Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ և օգնելով իրար՝ հասնեում ընդհանուր նպատակին:
3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.** Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. **Սոցիալական համագործակցային հմտություններ.** անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:
5. **Խմբային գործընթաց.** Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:
6. **Փոխներգործուն առաջադրանք.** Հետագայում այս տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը, որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

1.3 Համագործակցային ուսուցման սկզբունքները

Համագործակցային ուսուցման չորս հիմնական սկզբունքները ըստ Սպենսեր Կագանի՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ ՝ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) Անձնական պատասխանատվություն ՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար:

գ) Կառուցողական փոխկախվածություն ՝ անհատական զարգացումն ու խմբի

զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

դ) Հավասարաչափ մասնակցություն ՝աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով:

Սակայն վերը նշված սկզբունքները չպահպանելու դեպքում, համագործակցային ուսումը տեղի չի ունենա:

1.4 Համագործակցային մեթոդներն և դրանց կազմակերպման ձևերը

Համագործակցային ուսուցման մեթոդներ են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, մտածի՛ր-զույգ կազմի՛ր-հաղորդի՛ր, դերախաղ:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում:

2. Խճանկար (Jigsaw):

Խճանկար մեթոդը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով.

- Խճանկար մեթոդի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ կարդալ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվածքներ:
- Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարբեր ոլորտներ, օրինակ՝ տեքստի բառապաշարը, քերականությունը, հիմնական գաղափարները, ոճը, երկխոսություններ կազմելու ձևը և այլն:
- Աշակերտները կարող են խճանկար-մեթոդը կիրառել անկախ հետազոտությունների նախագծեր իրագործելիս: Յուրաքանչյուր խումբ պատասխանատվություն է կրում ընդհանուր թեմայի սահմաններում մի կոնկրետ ոլորտի ուսումնասիրության համար:

Կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

1. Պարզեք տրված դասի մեջ կարևոր թեմաների հետ առնչվող նյութերը: Հաշվի առնել առաջադրանքը կատարող աշակերտների գիտելիքները և, եթե անհրաժեշտ է, ընտրեք տարբեր բարդության ու հագեցվածության հատվածներ:
2. Աշակերտները 4–6 հոգիանոց համագործակցային խմբեր են կազմում (խմբի անդամների թիվը կախված է ընտրված տեքստերի քանակից) : Յուրաքանչյուր խմբից մեկը պատասխանատվություն է կրում մի հատվածի ընթերցանության համար: Ելնելով խմբի բնույթից կամ ինքներդ հանձնարարեք ընտրված հատվածները, կամ թույլ տվեք, որ երեխաներն իրենք ընտրեն ըստ ցանկության:
3. Առաջարկեք ինքնուրույն կարդալ իրենց հանձնարարված հատվածը: Եթե տեքստերը պատճենահանված են, կարող եք առաջարկել նրանց աշխատել փոխգործուն նշաններով: Աշակերտներին խնդրեք գրառումներ անել կամ կարևոր գաղափարների

աղյուսակ կազմել:

4. Վերախմբավորեք աշակերտներին՝ ըստ հանձնարարված տեքստերի (մի խմբում են հավաքվում բոլոր նրանք, ովքեր նույն տեքստն են կարդացել և ուսումնասիրել: Այդպես կկարողանան համեմատել գրառումները և քննարկել տեղեկությունները, իրենց մտքերն ու կարծիքները: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք ամփոփ տալ տեքստից ստացված գիտելիքը: Հաջորդ օրը դասարանի բոլոր անդամները պետք է ունենան ժողովածուի իրենց անձնական օրինակը:
5. Աշակերտներին հանձնարարեք վերադառնալ իրենց նախնական խմբերը: Հիմա մի խմբում հավաքված են դասի սկզբում քննարկման ներկայացված բոլոր տեքստերի մեկական «փորձագետ»: Նրանք կարող են իրենց հատվածի մասին ձեռք բերված կարևոր տեղեկությունները հաղորդել մյուսներին՝ օգտվելով նախօրոք գրված թերթիկներից: Խմբի մնացած մասը պատասխանատու է նոր տեղեկատվության յուրացման համար, որը կգնահատվի տվյալ նյութի գնահատման ժամանակ:

Առավելությունները՝

- Աշակերտները ծանոթանում են ավելի լայնածավալ նյութի, քան հնարավոր կլիներ, եթե նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն ուսումնասիրեր բոլոր աղբյուրները:
- Կարող են յուրացման համար ընտրել այն նյութերը, որոնք առավել շատ են համապատասխանում իրենց ընդունակություններին և նախասիրություններին: Ընթերցանությունից քաղածը յուրացնելու համար աջակցություն են ստանում իրենց դասընկերներից:
- Ձեռք են բերում կարդացած հատվածից կարևորը ընտրելու և համադրելու հմտություն, քանի որ նրանք խմբի մնացած անդամների համար ուսուցչի դեր են ստանձնում:

Մտածի՛ր-զույգ, կազմի՛ր-հաղորդի՛ր (Think/Pair/Share):

Այս մեթոդը ներառում է հետևյալ քայլերը.

1. Աշակերտներին խորհրդածելու համար մի որոշակի հարց կամ հիմնախնդիր առաջադրեք՝ ժամանակ տալով ինքնուրույն մտածելու:
2. Առաջարկեք թեման քննարկել զույգերով:
3. Առաջարկեք, որ զույգերն իրենց քննարկման արդյունքները ներկայացնեն ամբողջ դասարանին: Ի հավելումն քննարկման՝ աշակերտներին առաջարկեք զույգերով աշխատելու փուլում կիրառել մտածողության տարբեր տեսակներ՝ փոխհամաձայնություն հիմնախնդրի վերաբերյալ, խնդրի լուծում կամ բանավեճ հակադիր տեսակետների շուրջ:
4. Որպես մեկ այլ տարբերակ՝ զույգերից մեկին առաջարկեք ստանձնել «փորձագետի» դերը: Վերջինս «նորեկին» բացատրում է նոր նյութի բովանդակությունը: «Փորձագետը» պետք է այնպես խոսի նոր նյութի մասին, որ թեմային անտեղյակ կամ անծանոթ մարդը կարողանա հասկանալ այն: Անծանոթ գաղափարները կամ բառերը պետք է թարգմանվեն՝ «նորեկին» բացատրելու համար: «Նորեկը» հարցեր է տալիս՝ միտքը պարզելու և «փորձագետի» համար կրկնում այն, ինչ հասկացել է տեքստի բովանդակությունից: Վերջինս էլ ստուգում է, թե արդյո՞ք «նորեկը» ամեն բան ճիշտ է

հասկացել:
Երբ աշակերտներն սկսում են ավելի ինքնուրույն աշխատել, հանձնարարեք նրանց «փորձագետի» դերն ստանձնել դասարանից դուրս՝ փորձ ձեռք բերելու նպատակով:

Դերախաղ (Role Play):
Դերախաղն ուսուցչի համար լուրջ փորձություն է, որովհետև նրա մեջ անսպասելիի մեծ բաժին կա և՛ աշակերտի, և՛ ուսուցչի համար: Ուսուցչից պահանջվում է ստեղծագործական մոտեցում և դասարանում սովորողների համար ապահով միջավայր ստեղծելու հմտություն: Ուսուցիչները կարող են դերախաղ անցկացնել մեկ առանձին դասի կամ դասաշարի ժամանակ: Տևական նմանակումների ժամանակ աշակերտները կարող են որոշակի դերեր վերցնել և որոշ ժամանակ մշակել, զարգացնել դրանք (օրինակ՝ նախարար, տնօրեն, դատավոր և այլն), այն ընթացքում, երբ ուսումնական ծրագրի համաձայն խորանում է որոշ թեմաների ուսումնասիրությունը: Այն դպրոցական փորձը, որ ձեռք է բերվում դերախաղի մեթոդով, ապահովելով հուզական և ինտելեկտուալ կողմերը, կգրավի աշակերտներին՝ խթանելով նրանց թե հետաքրքրասիրությունը և թե՛ պատասխանատվությունը:
Առանձին ուշադրության է արժանի մնջախաղն իբրև դերախաղի տարատեսակ: Աշակերտներին դուր է գալիս դերախաղի այս տեսակը, որովհետև այն օգնում է հանգստանալ և միաժամանակ սովորել կամ փորձել առանց բառերի բացատրել որոշ գաղափարներ, հասկացություններ, ներկայացնել պատմական կամ գրական հերոսներին:
Այս մեթոդը շատ տարբերակներ կարող է ունենալ: Սակայն ամենատարածվածը հետևյալն է. դասարանը բաժանվում է երկու խմբի: Յուրաքանչյուրը գաղտնի որոշում է, որևէ գաղափար կամ պատմական հերոս: Բառն ասվում է մյուս թիմից միայն մեկ հոգու, որն առանց լեզվական միջոցներ օգտագործելու, միայն մնջախաղով ներկայացնում է իր խմբի մյուս անդամներին՝ տվյալ գաղափարը: Եթե խումբը հասկանում և գտնում է պահված բառը, հաղթում է: Այսպիսով, խմբերը հերթով, մնջախաղի օգնությամբ, բացատրում են որոշակի գաղափարներ: Սա մրցութային խաղ է և օգնում է հասկանալ բացատրության ոչ լեզվական միջոցները:



Սխեմա 1.2. Դերախաղի տեսակները

Առավելությունները.

- զարգացնում է աշակերտների միջանձնային հաղորդակցության հմտությունները,
- օգնում է գնահատել այլոց տեսակետներն ու մոտեցումները, ճանաչել և ընդունել դրանք, ըմբռնել, թե ինչպես որոշ մարդկանց որոշումները կարող են ազդել ուրիշների վրա,
- օգնում է սովորել որոշակի ուղղվածության լեզվական նյութը իրենց պատկերացնելով այդ դերերում,
- զարգացնում է աշակերտների հաղորդակցական ունակությունները, աշակերտներն ուսումնասիրում են այնպիսի ժամանակներ, վայրեր և իրադրություններ, որոնց հետ ուղղակիորեն չեն առնչվել:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Համագործակցային ուսուցման գործնական կիրառությունը ուսումնական գործընթացում

Համագործակցային ուսուցման դրույթների տեղայնացման գործընթացը ներառում է ուսուցման մեթոդների հարմարեցում՝ սովորողների մշակութային զգայունության և լեզվական կարողություններին համապատասխան: Այս դրույթի տեղայնացումը ընդգրկում է համագործակցային ուսուցման տարբեր տարրեր, ինչպիսիք են խմբի դինամիկան, դերերի բաշխումը և առաջադրանքների ձևավորումը, որոնք պետք է հարմարեցվեն ուսուցանվող նյութին:
Համագործակցային ուսուցման դրույթների տեղայնացումը անգլերենի ուսուցման միջոցով խթանելու և խրախուսելու է սովորողների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը կիրառել եմ 4-րդ դասարանում: 6 աշակերտից կազմված դասարանը բաժանեցի 2 խմբի: Քանի որ դասարանում սովորում է 4 աղջիկ և 2 տղա, խմբերը բաժանեցի այնպես, որ յուրաքանչյուր խմբում լինի 1 տղա և 2 աղջիկ: Wordwall.net գործիքի կիրառմամբ նախապատրաստել էի հարցեր, որոնք կազմված էին Meals տեքստի հիման վրա: Առաջին առաջադրանքի (նկ. 2.1) համար յուրաքանչյուր թիմին 2-ական հարցի հնարավորություն տրվեց, այնուհետև ունեցած միավորներին ավելացավ խմբի բոլոր անդամների պատասխանները, երկրորդ առաջադրանքից (նկ. 2.2): Երկրորդ առաջադրանքը ևս նույն գործիքի օգնությամբ էր ստեղծված, սակայն թիմի բոլոր անդամների պատասխանների հանրագումարն էր որոշիչ, թե որ թիմը առավելագույն միավորներ կհավաքեր:
Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:



Նկ. 2.1 Առաջադրանք 1-ին <<Open the box/Բացիր արկղը>>[3]

[3] https://wordwall.net/ru/resource/59889191/meals-questions

Նկ. 2.2 Առաջադրանք 2-րդ <<Random wheel/Պատահական անիվ>>[4]

Մտածի՛ր-զույգ, կազմի՛ր-հաղորդի՛ր (Think/Pair/Share) մեթոդը կիրառել եմ 5-րդ դասարանում <<The Greedy Hippo>> թեմայի յուրացումը համագործակցային մեթոդով իրականացնելու համար:

<<Մտածի՛ր>>: 1-ին քայլով սովորողներին հարցեր եմ տալիս՝

- How do you imagine a greedye or selfish person?
- Do you have greedy or selfish friends?
- Are you selfish?

Այնուհետև աշակերտներին հանձնարարում եմ մեկ րոպե մտածել պատասխանի մասին:

<< Զույգ կազմի՛ր>>: 2-րդ քայլով սովորողներին հանձնարարում եմ զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին մտածում: Այս հանձնարարության համար սովորողներին տրվում է 4-5 րոպե:

<<Գաղափարներդ կիսի՛ր>>: 3-րդ քայլով զույգերն ամբողջ դասարանին ներկայացնում են իրենց տեսակետները և քննարկման արդյունքները:

[4] https://wordwall.net/ru/resource/59889562/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%AB%D6%80-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%AB%D5%B6-meals

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համագործակցային ուսուցումը կարելի է ասել, որ այս մեթոդի ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը, սովորողի մեջ ձևավորելով՝ նոր գաղափարներ և հետաքրքրություններ: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտություններ):
Համագործակցային ուսուցման իմաստն է՝ յուրաքանչյուր անհատի դարձնել ակտիվ և կարող՝ լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Համագործակցային ուսուցման մեթոդի առավելություններն են՝

- Նյութի բազմակողմանի և ավելի խոր ուսումնասիրություն,
- խմբային աշխատանքը հեշտացնում է նյութի ընկալումը,
- աշակերտը հանդես է գալիս և՛ սովորողի, և՛ սովորոցնողի դերում, որն էլ ստիպում է լինել ուշադիր և պատասխանատու,
- ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործում,
- հաշվետու լինելու կարողության և անձնական պատասխանատվության ձևավորում, նյութը ներկայացվում է բազմապիսի ձևերով, ինչն էլ ընկալման ու կրկնության բազմաթիվ հնարավորություններ է ընձեռնում,
- մոտիվացիա և հետաքրքրությունների բավարարում, նոր նյութի յուրացում:

Տեղայնացված համագործակցային ուսուցման առավելությունն այն է, որ այն օգնում է լեզվի յուրացմանը, հաղորդակցման հմտությունների և միջանձնային հարաբերությունների բարելավմանը:

Այսպիսով՝ անգլերենի ուսուցման միջոցով համագործակցային ուսուցման դրույթների տեղայնացումը կօգնի արդյունավետ ուսուցման փորձառություններ ձեռք բերելուն:
Հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները՝ գործընկերներս կարող են օգտագործել համագործակցային ուսուցման դրույթները, որպեսզի խթանեն սովորողի անգլերեն լեզվի իմացությունը, կարողությունները և համագործակցության հմտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ. Գ. – Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա: Դասագիրք բուհերի համար: - Եր.: Լույս հրատարակչություն, 1985, 390 էջ:
2. Ամիրջանյան Յ. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Երևան 2005
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս. «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես» հրատ., 2006
4. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005
5. Методика обучения иностранным языкам: традиции и современность / Под ред. А. А. Миролюбова. - Обнинск: Титул, 2010. - 464 с.
6. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon
7. Johnson, D. W., Johnson, R. T., & Holubec, E. (2008) “Cooperation in the classroom" (8th ed.). Edina, MN: Interaction Book Company.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

1. http://csl.isc.irk.ru/BD/Ucheb/%D0%9C%D0%B5%D1%82%D0%BE%D0%B4%D0%B8%D0%BA%D0%B0 %D0%BE%D0%B1%D1%83%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F %D0%B8%D0%BD %D1%8F%D0%B7 %D0%9C%D0%B8%D1%80%D0%BE%D0%BB%D1%8E%D0%B1%D0%BE%D0%B2 2010.pdf
2. http://shsu.am/media/journal/2020n1b/25.pdf
3. https://tert.nla.am/archive/NLA AMSAGIR/Mankavarjutyun/2016%281%29.pdf

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի պլան

Դասարան՝ 5-րդ
Առարկա՝ անգլերեն
Թեմա՝ The Greedy Hippo

Նպատակներ՝

- զարգացնել ընթերցելու և վերլուծելու կարողությունը,
- սովորեցնել տարբերակել հեքիաթի տեսակները,
- ձևավորել վերաբերմունք բարու և չարի հանդեպ,
- տարբերակել դրական և բացասական կերպարները:

Վերջնաարդյունքներ՝

- կկարողանան սահուն և արտահայտիչ ընթերցել,
- կտարբերակեն հեքիաթի տեսակները, ինքնուրույն հեքիաթ կհորինեն,
- կբնութագրեն չար ու բարի երևույթները, իրենց վերաբերմունքը կարտահայտեն այդ երևույթների հանդեպ,

Խաչվող հասկացություններ - ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք, անհատ և հարաբերություններ:
Միջառարկայական կապեր – կերպարվեստ, գրականություն:
Դասի ընթացքը՝

1. Մուտքի քարտ,
2. Սահիկաշարի ցուցադրում,
3. Ընթերցում և վերլուծում,
4. Վեր հանել սովորողի իմացական գիտելիքները, օգտագործելով <<Մտածի՛ր-զույգ, կազմի՛ր-հաղորդի՛ր>> (Think/Pair/Share) մեթոդը:

<<Մտածի՛ր>>: 1-ին քայլով սովորողներին հարցեր եմ տալիս՝

- How do you imagine a greedye or selfish person?
- Do you have greedy or selfish friends?
- Are you selfish?

Այնուհետև աշակերտներին հանձնարարում եմ մեկ րոպե մտածել պատասխանի մասին:
<< Զույգ կազմի՛ր>>: 2-րդ քայլով սովորողներին հանձնարարում եմ զույգեր կազմել և քննարկել, թե ինչ էին մտածում: Այս հանձնարարության համար սովորողներին տրվում է 4-5 րոպե:
<<Գաղափարներդ կիսի՛ր>>: 3-րդ քայլով զույգերն ամբողջ դասարանին ներկայացնում են իրենց տեսակետները և քննարկման արդյունքները:

Տնային աշխատանք – գրել կարճ պատմություն տրված բառերով, ձևավորել նկարներով:

Ելքի քարտ՝

1. Ի՞նչ սովորեցինք:
2. Ի՞նչն էր անհասկանալի:
3. Ի՞նչ կփոխեինք:

Կապը ՀՊՉ-ի հետ – Հ34, Հ35, Հ41: